

## ՆՈՐԱՐԱՅՑ ՀԵԹԱՍՈՍԱԿԱԾ ՏԱԲԱՐ ԱՐՏԱՇԱԾ ՄԱՅՐԱՔԱՂԱՔՈՒՄ

### ԺՈՐԵՍ ԽԱՉԱՏՐՅԱԾ

Հայաստանի Հանրապետության ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի Արտաշատի հնագիտական արշավախումբը 2009 թ. ամռանը և աշնանը շարունակեց աշխատանքները քաղաքի հյուսիսարևմտյան տեղամասում, Արաքսի ծախ ափին, գետից 70 մ հեռավորությամբ, բլրի վրա, առաջին հարթակի (մ. թ. ա. II դ.) արևելյան պատի դիմացի եռանավ բազիլիկի արևելյան հատվածում: Բլրակի վերին մասում բացվեցին Ապոլոն-Տիրի տաճարի հիմնապատվանդանի պատերը (արևելյան պատի երկ.՝ 22 մ, հարավ.՝ 31.50 մ, հյուսիս.՝ 2.80 մ, որի շարունակությունն աշտարակը կառուցելիս ավերել են): Արևմտյան աստիճանավոր հիմնապատի (ստիլոբատի, stylobates) մի հատվածն է միայն պահպանվել (աղ. I, 1)<sup>1</sup>: Որմերը կառուցապատված են սև մարմարի զանգվածեղ քարերով: Որոշ հատվածներում ժայռերը ուղղահայաց հատել են պատերի երկայնքով, իսկ հարավային պատի մաս կազմող ժայռը որոշ տեղերում հարթեցվել է, որպեսզի երկրորդ շարքի քարը չսահի: Պահպանվել է հիմնապատվանդանի մի շարքը: Հարավարևելյան անկյունից, որտեղ ժայռը ավելի ցածր է, երկու շարք են շարել (բարձր.՝ 1,65 մ, աղ. I, 2): Արևելյան պատին՝ հիշյալ անկյունից 1,25 մ հեռավորությամբ դեպի արևելք, պահպանվել է ոռւստիկ մշակումով և ծիծեռնակապոչ կապերով չորս կրաքարերից բաղկացած որմի առաջին շարքը (երկ.՝ 2,30 մ): Չորրորդ քարի ծիծեռնակապոչ կապը վկայում է, որ պատը շարունակվել է (աղ. I, 3): Այդ են հավաստում նաև նույն ուղղության վրա գտնվող ժայռի հարթեցված երկու աստիճանները (երկ.՝ 4,55 մ) և դրանց շարունակությունը կազմող ժայռի մեջ փորված և մեջն ազուցված կրաքարե մեծ ու փոքր սալերը (երկ.՝ 1,15 մ, ընդհանուր երկ.՝ 7 մ, աղ. II, 6):

Ծիծեռնակապոչ կապերով պատը պատվանդանի արևելյան կողմում գտնվող աստիճանների եզրային պատն է: Տաճարի հրապարակը 1500 քառ. մ է: Այն ունի տաճարի կրաքարի տաշեղներից բաղկացած, լավ տոփանված մակերես: Պարզվում է, որ տաճարի քարերը մշակվել են տեղում:

Պատվանդանի հյուսիսարևելյան պատի մոտ, հատակին գտնված Արտաշատի քաղաքային պղնձե դրամը (աղ. I, 4, թվագրվում է մ. թ. 4-6 թթ.) և վերը նշված ծիծեռնակապոչ կապերով պատը հավաստում են, որ վերջինս Արտաշես Առաջինի կառուցած տաճարն է: Բլրակի հարթեցված գագաթը, որի վրա բարձրացել է կրաքարե սյունաշար տաճարը, արևելյան կողմում գտնվող սրբազն հրապարակից բարձր է երեք մետրով: Հիմնապատվանդանի բարձրությունը թելադրված է ռելիեֆով: Աստիճանները ակներևաբար եղել են տասը (բարձր.՝ 30 սմ): Վերջիններս հյուսի-

<sup>1</sup> Զափագրությունը՝ ճարտարապետ Ամինա Կանեցյանի:

սային կողմից եզերող պատը տակավին չի հաջողվել գտնել: Սակայն, եթե նկատի ունենանք աստիճանները հարավային կողմից եզերող պատի հեռավորությունը, ապա այն պետք է հավասար լիներ հյուսիսային կողմի պատի հեռավորությանը՝ հաշվի առնելով, որ այդ պատերը առնվազն 1-1,5 մ լայնությունից հետո պետք է ունենային անմիջապես աստիճաններին հարող պատ: Դետևաբար, աստիճանների լայնությունը լինելու էր 16,5 կամ 17,5 մ:

Տաճարի դիմացի հրապարակից գտնվել է կրաքարից մշակված մի մեծ սալ (Երկար.՝ 1,3 մ, լայն.՝ 82 սմ, բարձր.՝ 46 սմ), որը հավանաբար ցելլայի քարն է՝ ծուլված կաղապարի մեջ, կրաշաղախի կիսակլոր հարդարանք, շեղանկյունաձև և օվնաներով (ձվաձև) զարդարված մաս (աղ. II, 11): Վերին մասում փոքր կլոր փոսիկ ունի՝ մետաղյա ձողի օգնությամբ պատին ագուցելու համար (բարձր.՝ 23,35 սմ, լայն.՝ 14,44 սմ):

Շոգեբաղնիքի սենյակ տանող միջանցքի հարավարևելյան անկյունից պատը թեքվում է արևոտքը: Ի տարրերություն հարթակների մյուս պատերի՝ այն ունի աստիճանավոր հիմնապատ (ստիլոբատ, աղ. II, 10, լայն.՝ 25 սմ): 2008 թ. ամռանը բացվել է նաև պատի 4,30 մ հատվածը (լայն.՝ 2,3-2,5 մ): Այն շարված է կրաքարե և տուֆե խոշոր, զանգվածեղ քարերով: Դարավային պատի ներքուստ բացված հատվածի վրա (բարձր.՝ 3,5 մ) միջնադարում դրվել է ավելի նեղ պատ: 2009 թ. բացվել է նաև հարավային պատի շարունակությունը (արտաքուստ՝ 16,60 մ, աղ. I, 1, II, 12, ներքուստ՝ 12,45 մ), որտեղից այն թեքվել է դեպի հյուսիս (բարձր. ստիլոբատով՝ 4,10 մ): Արևմտյանի միայն վերին մասն է բացվել (բարձր.՝ 1 մ, լայն. նույնն է՝ 2 մ, երկարությունը հավասար է արևելյանին, արտաքուստ 12,40 մ է, ներքուստ՝ 10 մ): Վերջինիս միայն ներսի երեսի շարն է պահպանվել՝ արտաքուստ քարերը 5,20 մ հետո չեն շարունակվում: Եվ արևմտյան, և արևելյան պատերն ընդհատվում են վերոհիշյալ ծիծեռնակապոչ կապերով պատի ուղղությամբ, որից հետո խճաքարե լիցք է: Կարծում ենք՝ նույն լայնակի պատը պետք է լիներ հյուսիսային կողմում: Արևելյան և հարավային պատերի վրա դռան բացվածքը բացակայում է: Արևմտյանը մաքրելուց հետո էլ եթե դրու չունենա, պետք է ենթադրել՝ մուտքը եղել է վերևից (առաստաղից): Թեև սենյակի ներսը մաքրված չէ, սակայն համոզված կարելի է ասել, որ տաճարի մերձավորությամբ այդպիսի լայն պատերով սենյակը կարող էր լինել գանձատուն, որտեղ պահպան էին Ապոլոն-Տիր աստծուն նվիրաբերվող ընծաները (աղ. I, 1, II, 12):

Դայաստանի հեթանոսական տաճարների նշխարների, նվիրատվությունների մասին են վկայում հայ և օտար գրավոր աղբյուրները: Պլուտարքուսը հավաստում է, որ «Տիգրանակերտը լի էր գամձերով և աստվածներին նվիրաբերված թանկարժեք ընծաներով, քանզի մասնավոր անձինք և մեծաստիմիկները, ցանկանալով հաճոյանալ թագավորին, մինյանց հետ մրցում էին քաղաքի շինության ու ընդարձակման համար»<sup>2</sup>:

Ազգաբանգեղոսը հիշատակում է հայ Արշակունի թագավորների՝ իրենց տոհմի հայրենական ութ պաշտամունքի վայրերին (տաճարներին) կատարած նվիրատվություններն ու զոհաբերությունները: Խոսրով թագավորը, պատերազմում հաղթելով պարսից թագավորին, վերադառնալով Դայաստան, «հրաման տվեց բոլոր կողմերը պատվիրակ ուղարկել, հրովարտակներ հղել՝ հրամայելով յոթ մեհյանների բագիններին ուխտի գնալ, պաշտամունք կա-

<sup>2</sup> Plut., Lucul, XXVI (Плутарх, Лукулл. XXVI. Сравнительные жизнеописания в трех томах. Т. II. М., 1963):

տարել աստվածների կուռքերին: Իր Արշակունի տոհմի հայրենական պաշտամունքի վայրերը մեծարեց՝ նվիրաբերելով սպիտակ ցուլեր ու նոխազներ, ճերմակ ծիեր ու ջորիներ, ոսկեղեն ու արծաթեղեն զարդեր՝ փողփողուն ծոպերով, պսակներով ու շարաններով զարդարուն մետարսէ զգեստներ, ոսկի պսակներ ու արծաթ զոհարաններ, քանկագին քարերով լի գեղեցիկ անոթներ, ոսկի ու արծաթ, պայծառագույն հանդերձներ և գեղեցիկ զարդեր: Մեկ հինգերորդ բաժին համեց բերված հարուստ ավարից և մեծ պարագաներ շնորհեց քուրմերին, իսկ իր հետ եղած զորքին ընծաներ տվեց ու արձակեց»<sup>3</sup>:

Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուց հետո Գրիգոր Լուսավորիչը կործանեց հեթանոսական աստվածների մեհյանները և իրենց կալվածքներով ու գանձերով շնորհեց Եկեղեցիներին: Արտաշատի Անահիտի տաճարն ավերեցին «...և ամբարված գանձերը աղքատներին, տառապյալներին ու չքավորներին բաժանեցին: Դաստակերտներն ու սպասավորներին, քրմերով հանդերձ Եկեղեցու պետքերին ծառայելու համար»<sup>4</sup>: Երբ Կեսարիայից «Եկավ հասավ Հայաստանի սահմանները, Գրիգորը լսեց, թե Վահանյան մեհյանը մնացել է Տարոնի Երկրում՝ մեծագանձ մեհյանը լի ոսկով ու արծաթով և մեծամեծ թագավորների ծոնած բազում նվերներով: Պաշտամունքի ութերորդ հռչակավոր [Վայրը] էր Վիշապաքաղ Վահագնի անվամբ, Մեծ Հայրի թագավորների զոհերի տեղը»<sup>5</sup>: Նույնը կատարվեց նաև մյուս տաճարների հետ<sup>6</sup>: Այսպիսով, Սիհր-Ապոլոն-Տիրի տաճարը պետք է ունենար ոչ միայն գանձատուն, այլև դաստակերտներ, կալվածքներ, արոտավայրեր՝ զոհաբերվող կենդանիների համար: Վերոհիշյալ Սիհր-Ապոլոն-Տիրի գանձատունը քանդվել<sup>7</sup> և թալանվել է այդ ժամանակ: Տաճարի հիմնապատվանդանի հարավարևելյան անկյան դիմացի հողի լիցքի հայտնաբերվել է կրաքարե փոքր զոհասեղան (բարձր՝ 12 սմ, լայն՝ 7x8 սմ), որը, ըստ երևույթին, տաճարին արված նվիրատվություն է (աղ. II, 9):

«Գանձատան» արևմտյան պատի պահանված վերին շարքի մեջ, որն ավելացվել է վաղ միջնադարում, հայտնաբերվել է հոնիական երեք խոյակ և ջարդված խոյակի տարրեր մասեր (աղ. III, 14, 15): Այդ շարքում կան նաև կանելյուրներով սյան գլանի զանազան հատվածներ: Խոյակների (վոլուտայի) ոլորազարդերի միջանկյալ մասերը հարդարված են Երեք ձկածն զարդերով, որոնք իրարից անջատված են ներքև ուղղված նետալաքներով: Ձկածն զարդերը եզրերում ավարտվում են երկու կամ երեք տերևածն ռելիեֆ զարդերով: Ի դեպ, խոյակների այդ հատվածի ձևավորումները իրարից տարրեր են: Նմանօրինակ հարդարանքով խոյակ հանդիպում է նաև Գառնիի տաճարի խոյակների մեջ<sup>8</sup>: Վերջիններիս սյան վրա հաստատվող կողմն ունի 7-8 սմ բարձրության կամարակապ

<sup>3</sup> Ազարանգեղոս, Պատմություն Հայոց, Եր., 1977, § 22 (աշխարհաբար թարգմանությունը ներածականով ու ծանոթագրություններով՝ Արամ Տեր-Ղևոնյանի): Պլուտարքոս, Զուգահեռ կենսագրություններ, Լուկուլլոս, XXVI, «Հայ ժողովորի պատմության քրեստոնատիա», հատ. 1, Եր., 1981, էջ 238:

<sup>4</sup> Ազարանգեղոս, § 781:

<sup>5</sup> Նույն տեղում, § 809:

<sup>6</sup> Տե՛ս նոյն տեղը, § 784, 786, 790:

<sup>7</sup> Տե՛ս նոյն տեղը, § 781:

<sup>8</sup> Տե՛ս Սահինյան Ա. Ա., Գառնի, Եր., 1985, մկ. 29 էջում:

կանելուրներ: Դրանք նախորդ տարի Արտաշատում հայտնաբերված կանելուրներով սյուների վրա դրվող խոյակներ են: Խոյակների վուլուտայի մոդուլի համաձայն՝ տաճարի բարձրությունը պատվանդանի հետ միասին մինչև ծածկը եղել է 11 մ: Ուշագրավ է նաև հարթակի արևելյան պատի հարավային մասում հայտնաբերված հոնիական խոյակի կրաքարե բեկորը: Պահպանվել է վերջինիս միջպատճենութային տարածքի մեջ արված երեք գորելեֆ հոնիկներով հատվածը: Ինչպես հայտնի է, հոնիական օրդերով խոյակներով է օժտված Գառնիի տաճարը (առաջին դարի երրորդ քառորդ՝ մ. թ. 77 թ.): Ա. Սահինյանը կարծում է, որ Գառնիի տաճարում կիրառված հոնիական օրդերի համակարգը հիմնականում ունի փոքրասիհական ծագում<sup>9</sup>: Նմանօրինակ մի խոյակ հայտնաբերվել է Վրաստանում, Սարկինե հնավայրից<sup>10</sup>: Այդօրինակ խոյակները Վիտրուվիոսն անվանում է հոնիական՝ պատճառաբանելով, որ նրանք առաջինն են օգտագործել<sup>11</sup>: Վիտրուվիոսը գրում է. «...խոյակների վրա տեղակորցին ոլորազարդեր, որոնք գանգրացրած խոպուների նման կախվում էին աջից և ձախից, նրանց առջևի մասերը զարդարեցին կիմատիներով և պտղաշղթաներով, իսկ ողջ բնի վրայով անցկացրեցին ամուսնացած կնոջ զգեստի ծալքերի նման վայր իշնող կանելուրներ»<sup>12</sup>: Կ. Վ. Տրետյանը նշում է, որ դրանք Արևելյան ավելի վաղ էին հայտնի, քան հոլյուների մոտ, և վկայակոչում է Ե. Յերցֆելդի հրատարակած Մարաստանում գտնվող Da-ս-սուկտար-ի (նայր և աղջիկ) մ. թ. ա. VII դ. դամբարանը<sup>13</sup>, որի ճակատի չորս սյուների խոյակները հարդարված են պարուրածն զալարազարդերով: Յերցֆելդը դրանք համարում է «նախահոնիական»: Կ. Վ. Տրետյանը դա հիմնավորում է նաև նրանով, որ Յայաստանում, իին Մարաստանում (հրանական Քրդստանում և Լուրիստանում) նմանօրինակ խոյակները ավանդաբար պահպանվում են նաև հետագայում: Միջնադարի ճարտարապետներից Ալբերտին ոլորազարդի ծագումը կապում է ծաղի կեղլի հետ<sup>14</sup>:

Յելլենիստական աշխարհը, այդ թվում նաև հոնիացիները, սերտ կապերի մեջ էին արևելյան ժողովուրդների հետ, ենթարկվել են նրանց մշակույթի ազդեցությանը, ծանոթ են եղել շինարարական արվեստի նվաճումներին: Ըստ Յարտմանի՝ դրա արդյունքն է խարսխի հատուկ ձևի ստեղծումը «... և այնուհետև խոյակներում զալարազարդեր (խխունջներ, պարույրներ) մոցնելը, որ հայտնաբերվել է խեթերի և ասորեստանցիների մոտ: Ատտիկական հողի վրա տեղափոխված հոնիական ոճը հասնում է իր ամենակատարյալ արտահայտությանը և միաժամանակ առանձին ճարտարապետական մասերի յուրահատուկ ձևավորմանը»<sup>15</sup>:

<sup>9</sup> Տե՛ս Սահինյան Ա. Ա., Գառնիի անտիկ կառուցմերի ճարտարապետությունը, Եր., 1983, էջ 166, տախս. IX:

<sup>10</sup> Տե՛ս Առակիզ Ա. Գործա древней Грузии. Тбилиси, 1968, էջ. 50, նկար 11, այլուսակ XXI, 2, Հурմ Կիպիանի. Капители. Архитектура Грузии античного периода. Тбилиси, 1987, էջ 65, այլուսակ XIV-XVII:

<sup>11</sup> Տե՛ս Յուրի Բուրյուս, IV, I, 7

<sup>12</sup> Յուրի Բուրյուս, IV, I, 8

<sup>13</sup> Տե՛ս Herzfeld E. Iran in the Ancient East, Oxford, 1941, էջ 207, pl. XXXV-XXXVIII, տե՛ս նաև՝ Տրեվեր Կ. Վ. Очерки по истории культуры Древней Армении (II в. до н. э.- IV в. н.э.), Москва-Ленинград, 1953, էջ 74-75, նկ. 18, "Всеобщая история архитектуры в 12 томах". Т I. М., 1970, էջ 310, նկար 21:

<sup>14</sup> Տե՛ս Ալբերտի, VII, VI:

<sup>15</sup> Գարման. История архитектуры. М., 1936, с. 42.

Յոնիական օրդերի արմատները Արևելքում են նշմարում Շուագին և ուրիշներ<sup>16</sup>: Շուագին գրում է. «Բավական է հայացք ձգել ասիական ճարտարապետական հուշարձանների վրա համոզվելու համար, որ հոնիական օրդերը նրանց հետ ընդհանուր աղբյուր ունի: Յոնիական սյան բոլոր մանրամասները, իննիկներով խոյակները, կանելյուրները, խարիսխները զարմանալի ծշտությամբ վերարտադրված են Պատերայի խեթական քանդակներում, այսինքն Եփեսոսի տաճարի կառուցումից շատ առաջ»<sup>17</sup>: Մ. Գրիգորյանը այն կարծիքին է, որ «խոյակն» իր ստեղծման օրից ունեցել է խոյի եղջյուրներից ընդօրինակված պարույրածն ոլորագարդեր, եթե հայերեն «խոյակ» բառը ծագում է «խոյ» բառից, որը սկզբնապես վերաբերել է ոլորագարդով խոյակին: Յետագայում այն տաճածվել է նաև առանց ոլորագարդի խոյակների վրա<sup>18</sup>: Պատահական չէ, որ Գառնիի տաճարին նախորդել են նման տաճարական կառույցներ՝ նույնպես ոլորագարդ խոյակներով: Յնարավոր է, որ Գառնիի տաճարի կառուցումից հետո կյանքի են կոչվել նաև հոնիական օրդերով այլ տաճարներ<sup>19</sup>: Դրա օգտին են խոսում վաղմիջնադարյան գալարվող ոլորագարդեր ունեցող հուշարձանները Յայաստանում (Զվարթնոց, Արուճ, Պտղնի, Զըրվեժ և այլն): Այսինքն՝ ոլորագարդով խոյակները Յայաստանում կիրառվել են անհիշելի ժամանակներից<sup>20</sup>:

Տաճարին վերաբերող ամբողջական և բեկորային վիճակում հայտնաբերված վեմերը՝ ատտիկյան խարիսխը (աղ. II, 13), կանելյուրներով սյուները (աղ. III, 16, 17), հոնիական (վույուտա) խոյակները (աղ. III, 14, 15, 16), սանդղածն երեք շերտերի մասնատված արխիտրավի նասերը (աղ. I, 5), ֆրիզի քանդակագրող քարը (աղ. III, 18), քիվի ատամնավոր բեկորները (աղ. III, 19) ամբողջացնում են սյուների հորինվածքը: Կարելի է ենթադրել, որ տաճարն ունեցել է հոնիական օրդերի սյունակարգ<sup>21</sup>:

Գանձարանի արևմտյան պատին զուգահեռ, 3 մ հեռավորությանը բացվում է բազալտի անմշակ մեծ քարերից կավե շաղախով շարված պատ, որը չի հասնում կրաքարե ծիծեռնակապոչ կապերով պատին (բացված երկ.՝ 6 մ, լայն.՝ 125-130 սմ): Վերջինիս արևելյան երեսի քարերը կանոնավոր շարված են, իսկ արևմտյան երեսի շարը անկանոն է, անհավասար: Այս պատից դեպի արևմուտք ավելի փոքր, ջարդած բազալտից և կրաքարից շարված պատ է ձգվում (լայն.՝ 80 սմ): Այս երկուսը եռանկյունաձև միջված են հյուսիսային կողմից նույն շարվածքով կառուցված մեկ այլ պատով (աղ. III, 20): Քանի որ պեղումներն այս հատվածում դեռևս ավարտված չեն, դժվար է որոշակի հետևողաբար հանգելը: Այստեղ, բացի միջնադարյան հասարակ խեցեղենից, երևան են եկել նաև II դ. պատկանող մանր ավազախառնուրդով բաց դարչնագույն կավից, դուրգի վրա պատրաստված, կարմիր անգոբով պատած, լավ փայլեցրած քասերի բեկորներ, ինչպես նաև մանրահատիկ բաց գույնի կավից պատ-

<sup>16</sup> Տե՛ս **Партенев И. А., Патажкова В. Н.** Очерки истории архитектурных стилей. М., 1983, էջ 26:

<sup>17</sup> **Огюст Шуази.** История архитектуры. Т. I. М., 1935, с. 253-254.

<sup>18</sup> Տե՛ս **Գրիգորյան Մ. Վ.**, Ոլորագարդով խոյակները հայ ճարտարապետության մեջ, «Պատմա-քանակիրական հանդես» (ՊԲՀ), 1959, № 2-3, էջ 259-263:

<sup>19</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>20</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>21</sup> Տե՛ս **Գասարջյան Ս.**, ճարտարապետական և շինարարական տերմինների ռուսական և հայ-ռուսերեն բացատրական բառարան, Եր., 2007, էջ 97:

րաստված, բաց դաշնագույն երանգով, վերին մասում արտաքուստ և ներքուստ (լայն՝ 3,3 սմ) մուգ դաշնագույն թուխ անգորով հարդարված, կիսագմդածն, փայլից գուրք թափ նասեր (տրամ՝ 13,2 սմ, բարձր՝ 7,5 սմ): Շրթից 8 մմ ներքև արտաքուստ անցնում է ակոսավոր գոտի, որը պսակն անջատում է իրանից: ԵՎ առաջինները, և երկրորդը իրենց գուգահեռներն ունեն Արտաշատի դամբարանադաշտի և VIII բլրի այդ շերտի խեցեղեն գտածոների մեջ<sup>22</sup>:

Պեղումներով հայտնաբերվել են նաև տաճարի նասուի (ցելլայի) գլխավոր սենյակի (սրբատեղի) շարի խոշոր վեմեր, հատակի, անտի (աղ. III, 21), աստիճանների քարեր. տակավին դժվար է որոշել, թե ինչ չափեր է ունեցել ցելլան: Հայտնաբերվածն ակներևաբար 22X31.5 մ չափերի բարձր (3 մ) հիմնապատվանդանի վրա տեղադրված հունահռոմեական պերիպտերոս է: Տաճար են բարձրացել արևելյան կողմի լայն աստիճաններով: Տաճարի հրապարակից հայտնաբերված կղմինդրների (սոլենների և կալիպտերների) բեկորները թույլ են տալիս ենթադրելու, որ տաճարն ունեցել է երկթեք տաճիք: Ինչպիսին են եղել նասուի և արտաքին սյունասրանների առաստաղները՝ առայժմ դժվար է ասել:

Գառնիի տաճարի ավերակները հայտնի էին, և այն համարվում էր այդօրինակ միակ կառույցը Հայաստանում՝ «որպես պատահական ճարտարապետական հուշարձան»: Արտաշատի պեղումներով հայտնաբերված տաճարի ավերակները հավաստում են, որ ունենք գեղեցիկ կառույցված սպիտակավուն երկրորդ շրեղ տաճարը, որը հայ հնագիտության XXI դարասկզբի ամենախոշոր գյուտերից մեկն է: Այն հնարավորություն է տալիս նորովի դիտարկել Արտաշատ մայրաքաղաքի, ինչու չէ՝ նաև Հայաստանի հելլենիստական շրջանի պատմությունն ու նշակույթը:

Հելլենիստական հարթակի արևելյան պատի դիմաց եռանավ սրահի (բազիլիկայի<sup>23</sup>) արևելյան հատվածում պեղումներով բացվել է յոթեռորդ մույթը, ութերորդը միջնադարում ավերվել է (աղ. II, 8): Սրահն ունի արևելք-արևմուտք դասավորված երկու շարք մույթեր, որոնցով բաժանվել է երեք նավի: Կենտրոնական նավն ավելի լայն է (4,40 մ), քան եզրայինները: Հարավային նավի լայնությունը (3,30 մ) գերազանցում է հյուսիսայինին (2,55 մ): Թեև սրահի արևելյան պատը տակավին չի բացվել, սակայն, եթե ընդունենք, որ մույթերի թիվը չորս գույգ է, վերակազմությունից պարզ է դառնում, որ սրահի մակերեսը 252 քմ է (լայն.՝ 12,40 մ, երկ.՝ 20,60 մ): Սակայն հնարավոր է նաև այն, որ դեպի արևելք կարող է շարունակվել և ունենալ նաև խորշ (աբսիդ): Հարցի պատասխանը կպարզվի միայն արևելյան պատը հայտնաբերելուց հետո:

Սրահի կավե շաղախով շարված մույթերը մ. թ. II դ. վերջին և III դ. սկզբին փոխարինվել են կրաշաղախով կառուցված և բազմերանգ որմնամկարներով հարդարված մույթերով: Վերջիններս IV դ. 30 սմ բարձրացվել են: Բազիլիկ կառույցները լուսավորվել են պատի վերին մասի ներ լուսամուտներով<sup>23</sup>: Տանիքն ակներևաբար եղել է փայտակերտ:

<sup>22</sup> Տես Խաչատրյան Ժ. Դ., Արտաշատ II, Անտիկ դամբարանադաշտեր (1971-1977 թթ. պեղումները), Եր., 1981, էջ 108-143, Խաչատրյան Ժ. Դ., Կանեցյան Ա. Գ., Արտաշատի VIII բլրի շերտագրությունը, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1974, № 9, էջ 76-91:

<sup>23</sup> Տես "Словарь Античности". М., 1989, էջ 69, Գասարջյան Ս., նշվ. աշխ., էջ 31-32:

Հայտնաբերված կղմինդրների բեկորները վկայում են, որ այն ունեցել է կղմինդրե ծածկ:

Սրահի հյուսիսային պատի արևելյան ծայրին XII-XIII դդ. գետեղվել է թռնիր (տր.՝ 80 սմ): Յյուսիսային՝ պահպանված պատի բարձրությունից (80-100 սմ) հայտնաբերվեցին ուշ միջնադարյան հասարակ խեցեղենի բեկորներ, իսկ հատակի վրայից գտնվեց Օգոստոս կայսեր պատկերով Անտիոքում կտրված պղնձե դրամ (աղ. II, 7), որի դիմերեսին կայսրի գլուխն է՝ դեպի աջ, դիմացը դրոշմված է փոքր կիսանդրի, որը հիշեցնում է Յերկուլեսին: Սրահի հյուսիսարևմտյան հատվածում ի հայտ եկան սև և կարմիր անգորով պատած, փայլեցված առաջին դարի խեցեղեն անորմների բեկորներ և օվալաձև, երկար կորով (թերի) բրոնզե գեղեցիկ հայելի:

Ինչպես հայտնի է, բազիլիկները Յունաստանում ծառայել են իրեն քաղաքացիական շինություն: Յողոնեացիների օրոք Վերջիններս դատավարությունների, գործարքների, առևտրի և այլ աշխարհիկ բնույթի հավաքատեղներ էին: Այն կարելի է համարել ժամանակակից «բռուսայի» հետ:

Այդ են վկայում նաև Ապոլոն-Տիրի տաճարի տարածքից 2003-2009 թթ. պեղումներով հայտնաբերված պղնձե դրամները (64). Վաթունը գտնվել է սրահից և կից կառույցից<sup>24</sup>: Հայաստանի վաղմիջնադարյան բազիլիկներն ուսումնասիրողները, տեղական նախաքրիստոնեական շրջանի ճարտարապետական հուշարձանների մեջ դրանց նախատիպերը չգտնելով<sup>25</sup>, այն համարել են բյուզանդական, սիրիական, փոքրասիական, միջագետքյան<sup>26</sup> և այլն: Թ. Թորամանյանը կարծում էր, որ վաղմիջնադարյան բազիլիկների ակունքները պետք է որոնել հեթանոսական տաճարների մեջ<sup>27</sup>: Բազիլիկների մեջ ամենանախնական վիճակում պահպանված կառույցը համարվում է Քասաղինը<sup>28</sup>: Ալեքսանդր Սահինյանը, հետազոտելով Քասաղի բազիլիկան, նշել է, որ այն գտնվում է Ապարանում, որը համարում է հայ Արշակունիների ամառանոցային նստավայրերից մեկը, իսկ բազիլիկան՝ նրանց աղոթատեղին<sup>29</sup>: Սահինյանը այն կարծիքին էր, որ «բազիլիկայի հիմնական կառուցվածքը առնչվում է նախաքրիստոնեական, իսկ հետագա հավելվածները՝ քրիստոնեական վաղ շրջանի ճարտարապետական արվեստի հետ»<sup>30</sup>:

Սիրիան, Բյուզանդիան և ընդհանրապես այս տարածաշրջանի երկրները միմյանց հետ տնտեսական և մշակութային սերտ կապերի մեջ էին, բոլորն էլ IV դ. սկզբին ընդունել էին քրիստոնեությունը, և նոր էին որոշվելու պաշտամունքի հետ կապված խնդիրները: Յնարավոր է, որ մինչ այդ հեթանոսական տաճարները հարմարեցվել են կամ ավերվածի տեղը

<sup>24</sup> Տես Խաչատրյան Ժ., Մոնումենտալ կառույցի մնացորդներ և ուշագրավ ծեսով թաղում Արտաշատից, ՊԲՀ, 2005, № 2, էջ 224, 226, նոյեմբեր՝ Նորահայտ մոնումենտալ շնորհյաներ Արտաշատից, «Էջմիածին», 2007, հունվար, էջ 31, 38, 43, Խաչատրյան Ժ., Կանեցյան Ա., Արտաշատի 2005-2006 թթ. պեղումների արդյունքները // Յին Հայաստանի մշակույթը, XIV, էջ 227, Վարդամեան Ռուբեն, «Պղնձե դրամների գանձ՝ Արտաշատի հնագիտական պեղումներից», «Հանդես Ամսօրեայ», 2009, № 1-12, էջ 33-66:

<sup>25</sup> Յելլենիստական և ուշ ամսիկ շրջանի ոչ մի հուշարձան դեռևս պեղված չէ:

<sup>26</sup> Այդ մասին գրականությունը տես Սահինյան Ալ., Քասաղի բազիլիկայի ճարտարապետություն, Եր., 1955, էջ 5-20:

<sup>27</sup> Տես Թորամանյան Թ., Տեկորի տաճարը, Թիֆլիս, 1911, էջ 76-77:

<sup>28</sup> Տես Ծովոն տեղը:

<sup>29</sup> Տես Սահինյան Ալ., Շշվ. աշխ., էջ 236:

<sup>30</sup> Նույն տեղում:

փայտից եկեղեցի են կառուցել, կամ էլ, համաձայն Ազաթանգեղոսի, պաշտել են խաչերը, որոնք խորհրդանշել են մարդկության համար Քրիստոսի և նահատակների չարչարանքները<sup>31</sup>:

Յինգերորդ դարը շրջադարձային էր հայոց եկեղեցու և ժողովրդի կյանքում<sup>32</sup>: Կրոնափիլխոփայական միտքը հասունացավ, նշակեց ու կանոնակարգեց հավաստի խորհրդանշաները, եկեղեցական ողջ արարողակարգը, տաճարների կառուցման սկզբունքները, քրիստոնիայի թաղման ձևը, ծեսը, խաչակնքելու կարգը և այլն: V դ. պաշտամունքային կառուցները՝ եկեղեցիները, սկզբնապես կարող էին ունենալ որոշ ընդհանրություններ, որոնք աստիճանաբար սրբագրվելու էին և ազգային էին դառնալու:

Ցավալի է, որ առ այսօր Յայաստանից մեզ հայտնի են հունական տիպի տաճարներ (Արտաշատ, Գառնի), բայց տեղական արևելյան տիպի տաճարներ չունենք: Ապարանն իր դիրքով, զովասուն կլիմայով, սառնորակ ջրով, իրոք, Արշակունիների ամառանոցներից մեկն էր: Այդ են վկայում տեղանունը՝ Ապարան-ապարանք, հունարեն արձանագրությունը: Ապարանք կարող էր կոչվել միայն արքայական պալատը և ոչ թե նախարարի նստավայրը<sup>33</sup>: Արքայական ամառանոցի տաճարը չէր կարող այդքան մեծ լինել: Երրորդ դարում արդեն պետք է կառուցեին հելլենիստական և ուշ անտիկ դարաշրջանին բնորոշ տաճար, ինչպես Արտաշատում և Գառնիում:

Արտաշատի սրահի, սակայն, լրիվ բացելուց հետո միայն պարզ կդառնա ճարտարապետական կերպարը: Առայժմ կարելի է ենթադրել, որ վերջինս կարող է լինել վաղմիջնադարյան բազիլիկների նախատիպը:

Յանոզված ենք, որ հաջորդ տարվա՝ 2010-ի պեղումները ի հայտ կբերեն լրացուցիչ նյութեր, որոնք հնարավորություն կընձեռեն առավել հստակ պարզաբանելու բազում իրողություններ:

Արարատի համայնապատկերի վրա՝ Արտաշատի հարթավայրային մասում (Ներքին քաղաք), Արաքսի ձախ ափին, Տափերական կամրջի հարևանությամբ, բլրի գագաթին կառուցված ճարտարապետական այս յուրօրինակ, հետաքրքիր հուշարձանախումբը՝ տաճարն իր հրապարակով, հրապարակ և տաճար բարձրացող լայն աստիճաններով, հասարակական բաղնիքով, եռանակ բազիլիկով (սրահով) և այլն, կազմել են ճարտարապետական ուշագրավ համակառուց, որը երևացել է ինչպես վերին քաղաքից, այնպես էլ հեռվից՝ քաղաք տանող ճանապարհից: Իր ճարտարապետական մտահղացմամբ, դիրքով, այն քաղաքի գեղատեսիլ հատվածներից էր: Նմանօրինակ կառուցներն են, որ նշմարել են Ստրաբոնը<sup>34</sup> և Պլուտարքոսը<sup>35</sup> և ընդգծել քաղաքամայր Արտաշատի շքեղ քաղաք լինելը:

<sup>31</sup> Տե՛ս Ազաթանգեղայ Պատմութիւն Յայոց (քննական բնագիրը՝ Գ. Տեր-Սկրոտչյանի և Ա. Կանայանցի, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Արամ-Տեր Ղևոնյանի), Եր., 1983, § 80, տե՛ս նաև՝ § 82, 83, 747, 749, 751, 769:


<sup>32</sup> Տե՛ս Խաչատրյան Ժ., Արտաշատը Յայոց դարձի նախօրեին և հետո, «Էջմիածին», հիկունքեր, 2002, էջ 62:

<sup>33</sup> Տե՛ս Ամառյան Դր., Յայերեն արմատական բառարան, հ. I, Եր., 1971, էջ 230:

<sup>34</sup> Տե՛ս Страбон. География в 17 книгах, XII, 14. Л., 1964:

<sup>35</sup> Տե՛ս Պլутарх. Лукулл. XXXI, 5, Сравнительные жизнеописания в трех томах. Т. II. М., 1963:

## Աղյուսակ I



1



2



11.67 g, 26.0 mm



3

4

5

## Աղյուսակ II



6



7



8




9

10

11



12



13

38

### Աղյուսակ III



14



15



16



17



18



19



20



21

### **ЖОРЕС ХАЧАТРЯН - Нововыявленный языческий храм в столице**

**Арташате.** – Археологическая экспедиция в столице Арташате в 2009 г. продолжала работы на северо-западном участке древнего города, на левом берегу Аракса, на холме, в 70 м от реки, и на первой площадке (II в. до н. э.) напротив восточной стены в восточной части трехнефного зала. В верхней части холма были открыты стены стилобата (22 x 31,5 м) храма Аполлона-Тира, сложенные из цельных глыб черного мрамора, четыре известковых камня (длина 2,3 м) восточной стены, скрепленные связками "ласточкин хвост". Были обнаружены также три известковые ионические капители, различные обломки цилиндрических колонн с каннелюрами. Строительная техника лестниц и городские бронзовые монеты Арташата (4-6 гг. н. э.) свидетельствуют о том, что храм был построен Арташесом Первым. Выровненная верхушка холма, на которой был воздвигнут храм, на 3 м выше площадки (1500 кв. м.). Найденные здесь аттические пьедестал, колонны с каннелюрами, ионические капители, разбитые на три части обломки ступенчатого архитрава, украшенный орнаментами камень фриза, зубчатые части карниза дают обобщенное представление о конструкции колонн. Можно предположить, что храм имел колонны ионического ордера. Найденные на площадке обломки черепицы позволяют предположить, что крыша храма была двускатной.

Вблизи храма открылась большая комната (изнутри 10 x 12,5 м) со стенами шириной 2 м и высотой 4,5 м, выложенными из камней с известковым раствором, которая могла быть хранилищем подношений богу Аполлону-Тиру.

Нововыявленный трехнефный зал имеет два ряда пилонов, ориентированных на восток-запад, которыми он разделен на три нефа. Хотя восточная стена зала еще не раскрыта полностью, из реконструкции становится ясно, что площадь зала составляет 252 кв. м. В конце II – начале III в. н. э. сложенные из известковых камней пилоны были заменены пилонами на известковом растворе, декорированными разноцветными фресками. Только после открытия всего зала станет ясна полная картина архитектурного строения целиком.

**ZHORES KHACHATRYAN - A recently-discovered heathen temple in the capital city of Artashat.** - In 2009, the archaeological expedition of the capital city of Artashat continued its work in the north-western area, on the left bank of the Araxes, on the hill at the distance of 70m, in front of the eastern wall of the first ground (II c. B.C.) and in the eastern part of a three-nave hall. The upper part of the hill revealed the walls of stylobate (22 x 31,5m) of Apollon-Tir temple, built of huge stones of black marble, four limestones of the first row (2,3 m long) of the last wall of the eastern part steps with ties like scissors. There have also been found three Ionic limestone capitals, different broken parts of the capitals and cylinder with column cannelures. The construction manner of the steps and the Artashat urban copper money (4–6 years, A.D.) testify that the temple was built by Artashes the First. The evened top of the hill, on which the temple was situated, is 3 metres high from the square (1500 sq m). The Attician base found in the area, the cannelured columns, Ionic capitals, dismembered architrave parts of the stepped three layers, the frieze stone decorated with sculptures, cogged fragments of the cornice preserve the columns' structure. It can be supposed that the temple used to have pillars of Ionic order. The tile fragments found in the square let us presume that the temple had a gable roof.

The vicinity of the temple revealed a big room with lime-built walls 2m wide and 4,5m high (inside 10 x 12,5 m), which could serve as a treasure house for the donations to God Apollon-Tir.

The recently-discovered three-nave hall has two rows of pylons arranged to east-west with the help of which it was divided into three naves. Though the eastern wall of the hall has not been opened yet, it is clear from the reconstruction that the area of the hall is 252 sq m. At the end of the II c. A.D. and the beginning of the third, the clay-built pylons of the hall were replaced by lime-built ones and decorated with those of multi-coloured frescos. The final layout of the architectural structure will be clear only after the complete opening of the hall.